

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«Այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ  
օծյալ Տերն է ... եկե՛ք գնանք մինչև Բեթղեհեմ և փեսենք, թե  
ի՞նչ բան է այս եղածը,  
որ Տերը մեզ ցույց տվեց» (Ղուկ Բ 11-15)

Հիրավի՝ յուրաքանչյուր քրիստոնյայի համար  
Նոր փարին հոգևոր վայելքի և հաշվեպնության  
օր է, «նոր հոգեգալուստ», որովհետև ամեն մի քրիստոնյա՝  
հարազատ և հավատարիմ մնալով Ավետարանին և նրա  
ոգուն, պեք է ուրախանա, երբ «անցավոր ժամանակի  
մեջ» անանց բարիք է ձեռք բերված՝ շինություն հարազատ  
ժողովրդի և ի պայծառություն Մայր Եկեղեցու: Իհարկե  
ժամանակը չէ որ անցնում է, հին փարին չէ, որ մեռնում ու  
նորից ծնվում է, այլ մարդն է, որ անցնում է ու մարդն է, որ  
կարող է վերածնվել, վերանորոգվել: Ժամանակի պտույտն  
անիմաստ կլինեք, եթե «մեծ և սքանչելի խորհուրդը»  
աշխարհի չգար ու չիմաստավորեք մեր ապրած ամեն  
վայրկյան ու ամեն պահ:

1

Դարեր առաջ Արդարության արեգակը՝ Հիսուս, իբրև  
Մարդու Որդի աշխարհ եկավ, որպեսզի մենք ծնվենք  
որպես Աստուծո որդիներ ու մեր փկար ու հոգևած հոգիները  
նոր ուժ ու եռանդ ստանան Ս. Ծննդյան անշեջ լույսից՝ եկող  
անճանաչելի փարվա մեջ առաջնորդվելով Բեթղեհեմյան  
պայծառ աստղով:

## ՆԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՆ

### ՈՒ ՀՈՎԻՎԻՆԵՐԻ ԱՅՅԸ

(Մաթթ. Ա 18-25, Ղուկ. Բ1-20)

Այդ փարվա վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակը  
Աստուծո կողմից ուղարկվեց Գալիլիայի Նազարեթ քաղաքը,  
Մարիամ անունով կույսի մոտ, ով նշանված էր Հովսեփի  
հետ՝ Դավթի փնից: Հրեշտակը նրան ասաց. «Ուրախացի՛ր,  
ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է... ահա դու կհղիանա և  
կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի  
և Բարձրյալի որդի կկոչվի... Նա հավիտյան կթագավորի  
հավերժ փարն և նրա թագավորությունը վախճան  
չի ունենա» (Ղուկ. Ա 26-33): Մակայն այս ամենը եղավ,  
որպեսզի կատարվի, ինչ-որ Տիրոջ կողմից ասվել էր Եսայի  
մարգարեի բերանով. «Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի  
պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում  
է «Աստված մեզ հետ» (Մաթթ. Ա 22-23):

2

Այդ օրերին Օգոստոս կայսեր կողմից ողջ երկրում մարդահամարի անցկացման հրաման արվեց: Տամա- ձայն դրա, Տովսեփն ու Մարիամը Գալիլիայի Նազարեթ քաղաքից գնացին Բեթղեհեմ, որը թարգմանվում է որպես «հացի տուն»: Այսպես Մարիամը ծնեց իր «անդրանիկ որդուն»: Այսպիսով կատարվեց Եսայու մարգարեությունը, թե՛ «խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ» (Մատթ. Գ 16):

Առաջինը խանձարուրի մեջ փաթաթված մանկանն այցելեցին հովիվները, ում Տիրոջ հրեշտակը հորդորեց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավերում, որը ամբողջ ժողովրդինը կլինի. որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է» (Ղուկ. Բ 10-11):

#### ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ

(Մատթ. Բ 1-12)

Տիտուսը ծնվեց Տրեստանի Բեթղեհեմ քաղաքում, Տերովդես արքայի օրոք: Այդ ժամանակ Արևելքից մոզեր եկան Երուսաղեմ, ովքեր հարցնում էին. «Ո՞ր է հրեա- ների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք Արևելքում և եկանք նրան երկրպագելու» (Մատթ. Բ 1-3): Ըստ ավանդության, նրանք երեքն էլ թագավորներ էին. առաջինն ազգությամբ պարսիկ էր՝ Մելքոն անունով:

Երկրորդը՝ հնդիկ՝ Գասպար անունով, իսկ երրորդը՝ արաբ՝ Բաղդասար անունով: Նրանք իրենց հետ նվերներ էին բերել Մանկանը՝ ոսկի, կնդրուկ և զմուռ: Ոսկին խորհուրդն էր Մանկան թագավոր լինելու, կնդրուկը՝ Նրա Աստվածության, իսկ զմուռը՝ փրկչարար և քավչարար մահվան: Աստղը, որը մոզերը տեսել էին երկնքում, նրանց առաջնորդում է մինչև մտորը, ուր Մանուկն էր:

«Եվ երբ այն տունը մտան, տեսան Մանկանը իր մոր՝ Մարիամի հետ միասին և ընկան ու երկրպագեցին նրան... Եվ երագի մեջ Աստղուց հրաման առնելով չվերադառնալ Տերովդեսի մոտ, այլ ճանապարհով գնացին իրենց երկրնե- րը» (Մատթ. Բ 11-12):

#### ՏԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

(Մատթ. Գ 13-17, Մարկ. Ա 9-11, Ղուկ Գ 21-22)

Երբ լրացավ Տիտուսի երեսուն տարին, Նա Գալիլիայից Տորդանան եկավ, Տովհաննեսի մոտ՝ նրանից մկրտվելու: Սակայն Տովհաննեսն ընդդիմացավ.

«Ի՞նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մոտ ես գալիս»:

Տիտուսը պատասխանեց. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծո ամեն արդարություն»: Եվ ամբողջ ժողովրդի մկրտվելուց հետո Տիտուսը ևս մկրտվեց: Իսկ երբ աղոթքի կանգնեց, երկինքը

բացվեց, և Սուրբ Նոգին աղավնու փետքով իջավ Նրա վրա, և երկնքից ձայն եկավ. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը»:

**ՆՈՒՆՎԱՐԻ 6-Ը՝ ՈՐՊԵՍ ՆԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՆԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆ**

Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության փոքր մեր Տեր Նիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալու և Աստվածհայտնության փոքրն է (Աստվածհայտնության փոքրն է կոչվում, որովհետև Աստուծո փառքը հայտնվեց ողջ մարդկությանը): Մինչև 4-րդ դար բոլոր քրիստոնյաներն այս փոքրը կարարում էին հունվարի 6-ին: 5-րդ դարից սկսած արևմտյան եկեղեցիներն այն փետրվարից հետո դեկտեմբերի 25-ին, փորձելով ազատվել արևի ծննդյան (ձմեռային արևադարձի) հեթանոսական փոքրից՝ այն փոխարինելով Աստվածհայտնության՝ «խսկական Արեգակի», «Իմանալի լույսի» փոքրով: Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ավանդապահորեն չփոխեց առաքելական ժամանակներից սահմանված կանոնն ու ցարդ պահպանել է հնավանդ սովորությունը՝ Նիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Մկրտության փոքրը կարարելով հունվարի 6-ին (մկրտությունը հիշատակել է Նորդանան գետում Նրա մկրտության): Նամաձայն Նին Կրակարանի, որևէ մեկը

իրավունք չունենալու քահանայություն անելու, եթե չէր լրացել նրա երեսուն փարին: Ուստի, երբ Նիսուսն սկսեց քարոզել (երբ սկսվեց նրա քահանայության շրջանը), Նա երեսուն փարեկան էր: Այդ պարճառով էլ Նախնական եկեղեցին Ծնունդն ու Մկրտությունը կարարում էր միննույն օրը, քանի որ Նիսուսն սկսեց քարոզել մկրտությունից հետո, որին և հարազատ է մնացել Նայ Եկեղեցին մինչև այսօր:

Նունվարի 5-ի երեկոյան եկեղեցում մատուցվում է Սուրբ Ծննդյան ճրագալույցի Պատարագ (ճրագալույց նշանակում է ճրագ (մոմ) լուցանել (վառել): Այն խորհրդանշում է բերթեղանյան աստվածը, որն առաջնորդեց մոզերին դեպի Նիսուս): Սուրբ Ծննդյան աստվածը իր գործությամբ առավել էր արեգակից, որովհետև ցերեկով էլ էր երևում, հար և նման Նին Կրակարանի ամպի սյանը, ինչպես գրում է Նովիան Ոսկեբերանը: Նունվարի 7-ին եկեղեցում սուրբ և անմահ Պատարագ է մատուցվում ի հիշատակ մեռելոց, և կարարվում է հոգեհանգստյան արարողություն:

**ԶՐՕՐՆՆԵՔ**

Նունվարի 6-ին Ս. Ծննդյան Պատարագից հետո կարարվում է ջրօրհնեքի արարողություն, որը խորհրդանշում է Նորդանան գետում Նիսուսի մկրտու-

թյունը: Նափուկ աղոթքներով և շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվում է Ավետարանով, ս. Խաչով և սրբագործվում սրբալույս մյուռոնով: Ս. Խաչը, ի նշավորումն Տիրոջ մկրտության, ջուրն է իջեցվում, ինչով Տիրոջից խոնարհաբար հայցում ենք, որպեսզի ինչպես այն ժամանակ Նորդանանում, այդպես և այժմ Ս. Տոգին իջնի՝ օրհնելով սրբի ջուրը՝ այն ընդունակ դարձնելով մկրտվողին մեղքերից լվանալու և հիվանդներին բժշկելու: Օրհնված ջուրը բաժանվում է ժողովրդին:

### ՍՈՒՐԲ ԾՆՆՆԴՅԱՆ ՏՆՕՐՆՆԵՔ

Սուրբ Ծննդյան փոնակափարությունների բաղկացուցիչ մասն է նաև փնփնեքի արարողությունը: Նոգևոր հայրերն, ըստ Եկեղեցու կանոնի, հունվարի 6-ից մինչև 13-ը շրջում են իրենց վիճակված հավաքացյալների փնփնեք և կափարում փնփնեքի կարգ: Սովորական օրհնությունից առավել այցելության իմաստը Քրիստոսի Ծննդյան ավետիսը փանելը և որպես լույս բոլոր ընփանիքներից ներս սփռելն է: Ս. Ծննդյան փնփնեքին քահանան օրհնում է հացը, ջուրը և աղը, որոնք կարևոր նախապայման են մարդու գոյության համար: Ապա քահանան օրհնում է նաև փան անդամներին և խունկ մաքուցելով՝ Աստծուն, ընփանիքի անդամների

համար պահպանություն հայցում Ամենակալից: Տնփնեքը ամեն ինչից առաջ Նայասփանյայց Եկեղեցու կողմից հայ ընփանիքի նվիրականության և կենտրոնականության հանգամանքի ու արժեքի ճանաչումն ու բարձրացումն է: Որպես օրհնության փնփնեքի և մնայուն նշանակ, փնփնեքի վերջում քահանան սեղանին փնփնեքի պարկերով նշխար է թողնում:

### ԱՄԱՆՈՐ

Ամանոր է կոչվում Նոր փարվա առաջին օրը: Ամանորը թարգմանությունն է հին պարսկերեն Նավասարդ բառի (նավ = նոր, սարեդա = փարի): Նավասարդը հին հայկական փոմարի առաջին ամիսն էր: Ամանորը կոչվում է նաև կաղանդ, որը նշանակում է ամսագլուխ, ամսամուր, այլ խոսքով՝ յուրաքանչյուր ամսվա առաջին օրը: Կաղանդ բառից ունենք նաև կաղանդչեքը, որը նշանակում է կաղանդի առիթով փրված նվեր: Կաղանդչեքի հասկացությունը գալիս է դեռևս Եդեմական պարտեզից. որպես նոր դարասկիզբ, մեր նախահայրն ամեն ինչ նվեր ստացավ՝ կյանք, միտք, ընփանիք: Եդեմական պարտեզում կար կենաց (կյանքի) ծառը, որից Ադամը պեղք է ճաշակել: Եվ սակայն նա նախընտրեց իմաստության ծառը, որով

կենսաց ծառը դարձավ անմաքցելի: Եվ սկսած այդ օրերից մարդկությունը միշտ երագել է այդ ծառի մասին ու Ամանորի փոնածառը մի փոքրիկ վերհուշ է նվիրական կենաց ծառի մասին, իսկ փոնածառի գլխին ամրացվող աստղը՝ բեթլեհեմյան աստղն է խորհրդանշում: Ինչպես մոզերն իրենց ընծաները բերեցին Տիտու մանուկին, այդպես էլ և մենք՝ քրիստոնյաներս, մեր ընծաներն ենք բերում կենդանի ծառին՝ զարդարելով եղևնին: Ինչ վերաբերում է Ձմեռ կամ Կաղանդ պապին, ապա նա Ջմյունիա քաղաքի ս. Նիկողայոս Սքանչելագործ հայրապետն է եղել: Ծնվել է 280 թ., Փոքր Ասիայի Լիկիա նահանգում: Մանկուց լինելով բարի և ընկերասեր, համաձայն Մարթ. ԺԹ 21-րդ համարի, իր ողջ ունեցվածքը վաճառել և սպասված գումարը բաժանել է աղքատներին: Ս. Նիկողայոսը համարվում է մանուկների հովանավոր սուրբը, ով լսում է փոքրիկների աղոթքները և նրանց համար բարեխոսում Բարձրյալի մոտ, ինչպես նաև կապարում երեխաների խնդրանքները:

Մեզ համար որպես երկնային պարզ է «հայության սուրբ հավաքի հավիտենական Տաճար Ս. Էջմիածինը, որն Ինքը՝ Աստված պարզեց Տայոց աշխարհին՝ իբրև կյանքի ու սիրո աղբյուր, իբրև միության ու խաղաղության վեմ»: Այս համոզումով էլ, Նոր փարվա շեմին,

ուղղենք մեր ընթացքը և հայցենք Տիրոջից, որ առմիշտ հաստատուն պահի Տայաստան աշխարհն ու Տայոց Եկեղեցին, ու Տայոց Տայրապետի ծաղկյալ մականի ներքո հավիտյանս և լիությամբ կենցաղավարեն օրհնաբեր աշխարանքն ու պարզաբարձ վաստակը, երկնառաք առաքիլություններն ու գեղեցկահյուս կենցաղը, և թող Տայաստան աշխարհի Տավարքի հայր, մեծն Լուսավորիչ Ս. Գրիգորի հովանավոր բարեխոսությունը մշտապես թևածի մեր աշխարհի խաղաղասեր կապույտ երկնքում՝ պարզելով մեզ աստվածահաճո կենցաղ, առաքելական համբերություն, ուղիղ ընթացք և հաստատուն եկեղեցի. «Ողորմություն քո, Տե՛ր, զհեղ մեր եկեցել գամենայն աուրս կենաց մերոց, բնակիչ մեզ ի փան Տեառն ընդ երկայն աուրս» (Ժամագիրք):

**Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:  
Օրհնեալ է Յայտնութիւնն  
Քրիստոսի: Ամէն:**

*Անդրանիկ սարկավազ Պողոսյան  
Գևորգյան Տոգևոր ճեմարան*